ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան.

Ի պատասխան Ձեր 24.08.2020թ. գրության՝ տեղեկացվում է, որ պատվիրվելու է Ն. Չարբախ /հատվածային/ թաղամասում կոյուղատար համակարգի /3000գծմ/ կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման գնման հայտ, որից հետո, նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա, առաջիկա տարիների ծրագրերում կնախատեսվեն Ն. Չարբախ թաղամասի /հատվածային/ կոյուղատար համակարգի կառուցման աշխատանքների գնման գործընթացը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Ն. Չարբախի հ.11-16 փողոցների հողային պաստառով /գրունտային/ ճանապարհների բարեկարգման աշխատանքներին հնարավոր կլինի անդրադառնալ թաղամասում կոմունիկացիոն ցանցերի կառուցման աշխատանքների ավարտից հետո:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ